# Արձանագրություն 4

***Տաշիր համայնքում 2026թ.-ին ստեղծված մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի Հանրային քննարկումների և լսումների փուլի արդյունքների նիստի***

*Ք. Տաշիր*
*24/02/2026թ., 10:00*

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝**

Նաթելլա Մուրադյանը - Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,

**Հանձնաժողովի անդամներ՝**

Ասյա Հարությունյան - Համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության, առողջապահության, սպորտի, մշակույթի, երիտասարդության և կրթության բաժնի պետ,

Սևադա Սարգսյան - Համայնքի ղեկավարի խորհրդական,

Խաչեն Մանուկյան - «Տաշիրի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրեն

**Համայնքի ակտիվ բնակիչ՝**

Ինեսսա Խանաղյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Աստղիկ Բարոյան - Համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, առևտրի, սպասարկման, գովազդի և տուրիզմի բաժնի առաջատար մասնագետ

## Օրակարգ

Տաշիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում հանրային քննարկումների և լսումների փուլի արդյունքների ավարտի ամփոփում:

Լսեցին՝

1.Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նաթելլա Մուրադյանին՝

-ողջունեց հանձնաժողովի անդամներին, ներկայացրեց ստացված առաջարկների քվեարկության հետ կապված տեղեկատվությունը:

-Ներկայացրեց քննարկումների մասին տեղեկատվություն, որը արվել է և՛ օնլայն, և՛ օֆֆլայն ձևաչափով:

-Արձանագրեց, որ ներկայացված «Տարեցների համար ժամանցի կենտրոնների ցանցի ստեղծում» առաջարկը, որով առաջարկվում էր համայնքի բոլոր բնակավայրերում ստեղծել տարեցների համար ժամանցի կենտրոններ, հավաքել է 417 ձայն, իսկ «Տաշիրի արդիական դիմագիծ. Մ3 մայրուղու հարակից շենքերի ֆասադների փոխարինում և պատշգամբների ոճային վերակառուցում», որով առաջակվել է Տաշիրի Երևանյան փողոցի, նույն ինքը Մ3 մայրուղու շենքերի ֆասադների և պատշգամբների ոճային վերակառուցում, հավաքել է 534 ձայն:

-Նշեց, որ համայնքում քվեարկության իրավունք ունեցողների՝16 տարին լրացած անձանց թիվը, ըստ ռեգիստրի տվյալների, կազմում է 24982 մարդ, որի 2%-ը կլինի 500 մարդ, սակայն ընդհանուր քվեարկողները եղել են 951 անձ: Մոտ 3 անգամ ավել մարդ է քվեարկությանը մասնակցել նախորդ տարվա համեմատ:

-Կարևոր է նաև արձանագրել առաջացած խնդիրները՝ հաջորդ տարիներին դրանցից խուսափելու համար: Օրինակ, տարեց մարդիկ մեծ ցանկություն ունեն մասնակցելու, սակայն առանց երիտասարդների օգնության չեն կարողանում գրանցվել, և SMS-ի ստացման խնդիրը, որը, թերևս, տարածքը սպասարկող օպերատորներից մեկ հետ էր միայն:

-Կարևոր է նշել, որ այս տարի բոլոր բնակավայրերը ավելի ակտիվ են եղել, քան նախորդ տարում:

-Արձանագրեց հանրային քննարկումների և լսումների փուլի ավարտը:

Լսելով հանձնաժողովի նախագահի տեղակալի ներկայացրած տեղեկատվությունը, քննարկելով հետագա անելիքները, Տաշիր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի հանրային քննարկումների և լսումների փուլի համարել ավարտված՝ դրական արդյունքներով,

2. Սկսել իրականացման փուլը՝ ժամկետը նշանակելով սույն թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 18-ը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ն. Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բարոյան